

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Կ.Շահգալդյանը

ք.Հրազդան

19.07.2012թ., ժամը՝ 11⁰⁰

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

- Մարզի խորհրդի անդամ 67 համայնքների ղեկավարներ
- Ա.Ղազարյան - ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
- Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1.Մարզի համայնքների 2012 թվականի առաջին կիսամյակի բյուջեների եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյան/

2.Համայնքների ղեկավարների կողմից առևտրի, սպասարկման և ծառայությունների ոլորտներում իրականացված ստուգումների արդյունքների և մարզպետարան ներկայացված հաշվետվությունների մասին:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ս.Հակոբյան/

3.Այլ հարցեր:

ԼՍԵՑԻՆ՝

1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյանի զեկուցումը մարզի համայնքների 2012 թվականի առաջին կիսամյակի բյուջեների եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

2.ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ս.Հակոբյանի զեկուցումը համայնքների ղեկավարների կողմից առևտրի, սպասարկման և ծառայությունների ոլորտներում իրականացված ստուգումների արդյունքների և մարզպետարան ներկայացված հաշվետվությունների մասին:


Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

ԱՌԱՋԱՐԿՎԵՑ՝

Համայնքների ղեկավարներին՝

1. Ապահովել համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրումը բոլոր հարկատեսակների և վարձավճարների գծով:

2. ՀՀ օրենսդրությամբ վերապահված պարտադիր լիազորությունների շրջանակներում ամբողջական ծավալով իրականացնել հսկողություն առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում:



Կ.ՇԱՀԳԱԼԳՅԱՆ